ԱՆԻ Ա. ՈՒԹՈՒՋՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱԿՈԲ Դ. ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՇԻՐԻՄԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Հայտնի է, որ Հակոբ Դ. Ջուղայեցին մահացել է 1680 թ. օգոստոսի 1-ին՝ 82 տարեկան հասակում[1]: Ժամանակի Կ. Պոլսի հայոց պատրիարք Կարապետ Կեսարացու որոշմամբ հանգուցյալ Կաթողիկոսը հուղարկավորվել է Բանկալթիի (Պեյօղլի, Պեկօղլի) թաղամասի Ս. Հակոբ հայոց գերեզմանատանը: Պոլսահայ հայտնի բանասեր Բ. Թուղլաճին, որ հատուկ ուսումնասիրություն է նվիրել Կ. Պոլսի հայոց եկեղեցիներին՝ հավատում է, որ Բանկալթիի գերեզմանատունը «Իսթանպուլահայ հնագույն գերեզմանատուններէն մէկն է եղած եւ գոյութիւն ունեցած է մօտաւորապէս ԺԶ. դարու կեսերէն սկսեալ»[2]: Իրոք, մատենագրական բազմաթիվ փաստեր վկայում են, որ Բանկալթիի ազգային գերեզմանատան տարածքը սուլթան Սուլեյման I Կանունին (1520-1566) նվիրատվել է իր անձնական խոհարարապետ վանեցի Մանուկ Կարասեֆերյանին: Իսկ վերջինս այդ տարածքը հատկացրել է հայկական համայնքին՝ որպես հանգուցյալներին հուղարկավորելու վայր[3]: Օսմանյան վավերագրերից մեկը, որ թվագրվում է 1661 թ., գերեզմանատունը հիշատակում է «Կիլիսպանը Էրմենիան» անվան ներքո[4]:

Գերեզմանատունը, որն այսօր արդեն գոյություն չունի, գտնվել է այժմ գործող Թաքսիմի զբոսայգու եւ ռազմական թանգարանի միջեւ ընկած տարածքում[5]:

Ահա այս գերեզմանատանն է, որ 1680 թ. օգոստոսի 2-ին հուղարկավորվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցին, թեեւ Կ. Պոլսում գործող հայկական երեք գերեզմանոցներում էլ «**գերեզման բացեալ**» ակնկալում էին Հայրապետին հողին հանձնել հենց իրենց մոտ.

---

1 Հակոբ Դ. Ջուղայեցու մահվան օրվա հանգամանքների վերաբերյալ տե՛ս մեր հոդվածը՝ «Էջմիածին», 2013, Ը., էջ 86-91:

2 **Pars Tuğlaci,** *Istanbul Ermeni Kiliseleri,* Istanbul, 1991, s. 217 (այսուհետև՝ Բ. Թուղլաճի):

3 Տե՛ս **Մ. Հանէեյան,** Հարիւրքսանհինգամեայ յոբելեան Բերայի Ս. Երրորդութիւն եկեղցւոյ, Իսպանբուլ, 1932, էջ 309-310, հմմտ. «Նոր լուր», օրաթերթ, Իսպանբուլ, 1939, 7 հունիսի; **K. Pamukcian,** Zamanlaz, Mekanlar, Insalar, Istanbul, 2003, էջ 264:

4 Տե՛ս **Բ. Թուղլաճի,** նշվ. աշխ., էջ 217:

5 Բակալթիի գերեզմանատան վերաբերյալ չափազանց արժեքավոր են ԺԸ. դ. հեղինակ Կոզմա Քեռմուրճյանի տեղեկությունները. «Թաքսիմից հետո սկսվում է մի ընդարձակ դաշտ, որ կոչվում է «Մեռալոց դաշտ», որովհետև այնտեղ են գտնվում ոչ կաթոլիկներին (հայեր, հույներ, բողոքականներ) պատկանող գերեզմանները» (տե՛ս, «Desirizione Topografica di Constantinopoli», Pasano, 1794, p. 67): Գերեզմանատան մասին ուշագրավ են նաեւ Ա. Ալպոյաճյանի (տե՛ս «Բիւզանդիոն», օրաթերթ, Կ. Պոլիս, 1911, №№ 4401-4404, 4408-4409), Գր. Մարգարյանի (տե՛ս «Ժամանակ», օրաթերթ, Կ. Պոլիս, 1911, №№ 753, 757, 761, 763) հրապարակումները:

Եւ ի պատիւ քո հանգստեան՝
յերիս տեղս գերեզման բացեալ,
Վիճեալ շատք ջատագովեալ՝
եւ գնշխար քո փառաւորեալ[6]:

Ի վերջո, հանգուցյալի վերջին կամքի համաձայն հուղարկավորությունը կատարվում է Ս. Հակոբում: Կաթողիկոսի մահը ցնցել է շատերին. վիշտն արագորեն ձեռք է բերել հասարակական հնչեղություն: Ժամանակակից բանաստեղծն արտահայտելով հանրության տրամադրությունները, ողբում է.

Տեառն Յակովբայ հայրապետիս
ի մէջ այսօր արդ հրաժարեալ:
Լացէ՛ք, լալկա՛նք, զորբերս ողբով,
թագն ի գլխոց մերոց բարձեալ:
Ո՛վ Հայաստան, հարսն զարդարեալ,
շրքեղ փեսայն քո արդ մեռեալ:
Զայրիութիւնդ նիստ ողբացեալ,
այլ ոչ դառնայ՝ անդարձ գնացեալ[7]:

Եւ պատահական չէ, որ կաթողիկոսի գերեզմանը, որ հայտնի է «Հոգեւոր Տէր» անունով, հենց սկզբից հույներն ու լատինները, անգամ թուրքերը՝

Իբրեւ սրբոյ յուխտ դիմեալք՝
յուխտատեղ քո գերեզմանի[8]:

Ուխտագնացությունները, որոնք, ի դեպ, շարունակվել են մինչեւ Ի. դարասկիզբը, տեղի էին ունենում շաբաթ օրերին[9], սակայն հետագայում դրանք կազմակերպվում էին երկուշաբթի՝ կաթողիկոսի թաղման օրը[10]: Ժողովուրդը «պատվել է Հակոբ Կաթողիկոսին ամենաբարձր նվիրական հասկացողությամբ՝ հրաշագործ սուրբի կոչումով»[11]:

«Հոգեւոր Տիրոջ» հրաշագործ լինելու վերաբերյալ ամենավաղ տեղեկությունը պահպանվել է Զաքարիա Քանաքեռցու մոտ, որ դեռեւս 1684 թվականին եղել էր Կ. Պոլսում, այցելել Ս. Հակոբ գերեզմանատուն ու խոնարհվել Կաթողիկոսի շիրիմին: Հենց Կ. Պոլսում Զաքարիան «զարմանահրաշ, սքանչելի» պատմություններ է լսել Կաթողիկոսի շիրիմի հրաշափառ բժշկական հատկությունների վերաբերյալ ու ընթերցողին է փոխանցում այն, ինչն իր աչքով է տեսել («զոր տեսի աչօք իմովք»): Քանի որ Զաքարիայի տեղեկությունները տարբերվում են այլ պատումներից, անհրաժեշտ ենք համարում այն

6 Տե՛ս **Ն. Ակինեան,** Երեմիա Չելէպի Քէօմուրճեան. կեանքն ու գրական գործունէութիւնը, Վիեննա, 1933, էջ 210:

7 Անդ, էջ 208:

8 Անդ, նշվ. աշխ., էջ 211:

9 Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Ստամպօլոյ պատմութիւն, հատ. Բ., հրատարակեց եւ ծանոթագրեց Վ. Թորգոմեան, Վիեննա, 1932, էջ 603 (այսուհետ՝ Վ. Թորգոմեան):

10 **Մաղաքիա արքեպ. Օրմանեան**, Ազգապատում, հատ. Բ., Ս. Էջմիածին, 2001, էջ 3037:

11 **Լեո,** Երկերի ժողովածու, հատ. III, գիրք առաջին, Երեւան, 1969, էջ 339:

բերել ամբողջությամբ. «Գնացի ի գերեզման Սրբոյն Յակովբայ ... եւ էր փաղաւար (= խրճիթ) մի շինեալ հանդէպ գերեզմանի նորա՝ երեսբաց, եւ գծուծ (= աղքատ) այր մի եբեր զշուրջառն՝ Աւետարանն եւ բուրվառն, եւ խօսէր փաճկերէն: Եւ ես կարծեցի զնա հռոմ գոլ, կամ ասորի, եւ կամ թէ հայ, որ ոչ գիտէ խօսել հայերէն: Եւ յետ օրհնելոյ գերեզմանին եկու դրամ Յակոբ երիցուն (որ էր աշակերտ իմ)՝ զի բաժանեսցէ քահանայիցն: Եւ եւ գծուծ առն քանի մի սրակ. եւ նա փարեալ եւ ցքոյ (= օղի) եւ բերեալ եւ ըմպել երիցանցն: Եւ մինչ կամէի հարցնել զովն եւ զուսրին գծուծ առնն, ահա եկն փառաւոր փաճիկ մի՝ եւ Գ. (= 3) կին ընդ նմա: Եւ բերին վասն գծուծ առնն ձիթապտուղ, եւ քացաղ, եւ հաց իւղով, որ ասի **սիմիթ** (= սիմինդր՝ եգիպտացորենի ալյուրով), եւ խաշեալ բակլա, եւ սիսեռն, եւ պանիր, եւ պնակով գերաջուր՝ որ է բօղայ, եւ եդ ի փաղաւարն, եւ ինքեանք վառեցին բազում մոմս ի վերայ գերեզմանին, եւ շուրջ գային զգերեզմանաւն աղաչելով: Եւ ես հարցի Յակոբ երիցուն, թէ ո՞վ են սոքա: Ասէ երէցն, դոքա փաճիկ են. եւ է փառաւոր երիտասարդն որդի աղքատին. այս մին կինն՝ կին սորա է, մինն՝ նո՛յն է սորա եւ կին որդւոյն, մինն դուստր սորա է, եւ մասամբ եցոյց ինձ: Իսկ գծուծս այս էր իշխան մեծ առաջի Վազրին (= վեզիր). եւ յանկարծակի տկարացաւ սա, եւ եղեւ անդամալոյծ, եւ ոտքն կցան ընդ ծունկն ի ներքոյ նստոյ տեղին. եւ բազում բժիշկ եկեալ ո՛չ կարեցին բժշկել զդա: Եւ է տուն դորա մերձ ի ծովն ի Ստամպօլ քաղաք: Յաւուր միում տեսանէ դա, զի բազում արք եւ կանայք մտեալ ի նաւ՝ անցանեն յայն կողմն ծովուն, եւ հարցնէ դա՝ թէ ո՞ւր երթան նոքա. եւ ասեն, յԱճամսպանայ պատրի (= պատրիարք) մի եկեալ եւ վախճանեալ է աստ, եւ դոքա գնան յուխտ ի գերեզման նորա: Իսկ դա ասացեալ է ազդմամբն Աստուծոյ, արդ առեալ տարէ՛ք զիս ի գերեզման նորա, եւ յուսամ առ Աստուած՝ որ աղօթիւք նորա ողջանամ, եւ այլ ոչ մեկնիմ ես ի տապանէ նորա: Եւ ստիպեաց զորդին իւր, որ առեալ եդին ի կուր, եւ անցուցին յայս կողմն. եւ եդին ի շալակ համալի (= բեռնակիր), եւ բերին աստ. եւ ի գալն պաղատանօք բողոքէր առ Աստուած. եւ յորժամ իջուցին՝ եդին մերձ առ գերեզմանն. եւ լալով ասէր, փի՛ր (= հոգեւոր հայր) Եաղուպ՝ յուսով եւ հաւատքով դիմեալ, եկի առ քեզ. կամ տո՛ւր մահ, եւ կամ բժշկեա՛ զիս, երկուցն զմինն շնորհեա՛ ինձ: Զայս ասաց պաղատանօք, եւ ի վերայ նստոյ տեղին շուրջ եկն զգերեզմանաւն: Եւ ահա ողորմութեամբն Աստուծոյ պարզեցան ոտքն, եւ ապա նստաւ ի վերայ ծնկացն, եւ շրջեցաւ դարձեալ զգերեզմանաւն. եւ ահա կանգնեցաւ յոտին, լայր եւ պաղատէր. եւ կալեալ զվերին քար գերեզմանին, եւ ի վերայ ոտին շուրջ եկն դարձեալ. եւ ահա արձակեցան ամենայն յօդուածքն. շրջէր ուղիղ որպէս էրն առաջագոյն: Եւ ապա անկեալ ի ներքո տապանին եւ այնքան եհար զճակատն ի քարն՝ մինչեւ այտուցեալ Ճակատն՝ եւ բարձրացաւ քան զգլուխն. ահա յայն օրէ մինչեւ ցայսօր ոչ մեկնի դա աստի, տիւ եւ գիշեր աստ է. եւ շինեաց զտաղաւարդ այդ, եւ բնակի ի դմա. ոչ ուտէ միս եւ ոչ ըմպելի ինչ. եւ կերակուր դորա այդ է՝ զոր եւ տեսանես: Եւ լուաւ թագաւորն[12] զդմանէ, առաքեաց առ դա՝ թէ ընդէ՞ր

12 Դժվար է ասել, թե խոսքը ո՞ր սուլթանի մասին է՝ Մեհմեդ III Դազիի (1648-1687), թե Սուլեյման III-ի (1687-1690):



Հակոբ Դ. Ջուղայեցու գերեզմանը մինչեւ տեղափոխվելը

Հակոբ Դ. Ջուղայեցու դամբարանը մեր օրերում

Ս. Հակոբ Հայոց գերեզմանատան ժամանակակից տեսքը՝
Թաքսիմ հրապարակը

Ս. Հակոբ Հայոց գերեզմանատունը 1930 թվականին

ծառայես գիսաւորի գերեզմանին, զի դու մուսրման (= մահմեդական) ես: Իսկ սա պատասխանի արար, թէ սա բժշկեաց զիս, վասն այն ծառայեմ սմա, եւ զհաւատս իմ պահեմ: Եւ եդուն թոյլ՝ եւ ասեն, որպէս եւ կամի՝ կացցէ, եւ զհաւատն իւր պահեսցէ. եւ ահա այս պատմութիւն նորա՝ զոր լուայ եւ տեսի»[13]:

«Հոգեւոր Տէր» մականվանյալ գերեզմանի վերաբերյալ ԺԷ. դ. վերջերի մի հին վավերագրից Վ. Թորգոմյանը քաղել եւ շրջանառության մեջ է դրել մեկ այլ հետաքրքիր պատում: Հակոբ Ջուղայեցու հուղարկավորությունից անմիջապես հետո գերեզմանատան հարեւանությամբ գտնվող զորանոցի թուրք զինվորները նկատում են, որ ամեն գիշեր Կաթողիկոսի դամբարանը լուսավորվում է «Ճառագայթագեղ» լույսով: Սույն հրաշքը կրկնվում է պարբերաբար, եւ շատերն էին ցանկանում անձամբ տեսնել այդ: Պարզվում է, որ դամբարանն ունի նաեւ հրաշագործ հատկություն. հայ եւ թուրք հիվանդ ուխտավորներն այստեղ սկսում են առողջանալ եւ թոթափել իրենց տկարությունը[14]: Գերեզմանի «բուժիչ ախտից մարմնականի» ի հայտ գալուց հետո է, որ Կ. Պոլսում շատ հայտնի Ջաքարիա խալֆան պատվեր է ստանում Կաթողիկոսի գերեզմանի վրա տապանաքար տեղադրել: Խալֆան կատարում է պատվերը եւ կառուցում մարմարյա մեծածավալ, գեղարվեստական բարձր ճաշակով շիրմաքար, որն օժտում է համապատասխան արձանագրությամբ: Տապանաքարը դրվել է թաղումից որոշ ժամանակ անց, երբ արդեն հայտնի էին գերեզմանի «բուժիչ ախտից մարմնականի» հատկությունները, փաստ, որն արդեն արձանագրել է այն կերտող արվեստագետը՝

... Եւ արդ տապանս **բուժիչ ախտից մարմնականի**
Յուսով ի սա **դիմեցելոց հրաշիւք** յայտնի
Ջկազմող սորին յիշել ի Տէր զարմիւք հայցի
զՋաքարիեայն որ ի խալֆայ հիւսնականի...[15]

Կաթողիկոսի գերեզմանի «բուժիչ ախտից մարմնականի» վերաբերյալ լուրը տարածվում է ամենուր: Ուխտավորների թիվն այնքան է սրվարանում, որ պատրիարքարանը դամբարանը շրջափակում է երկաթյա գեղազարդ ճաղաշարով՝ եռագմբեթ խաչակիր մանրամասներով: Թուրք զինվորներն էլ դամբարանի վրա հատուկ լապտեր են կախում, որը, ինչպես հավաստում է Վ. Թորգոմյանը, «մինչեւ վերջին ժամանակներս ամեն գիշեր զայն կվառէին՝ իւղն ալ իրենցմէ ըլլալու պայմանով»[16]: Հետաքրքիր է Ա. Գ. Հովհաննիսյանի համոզումը, թե «Հոգեւոր Տիրոջ» այցելուները գլխավորապես «Կ. Պոլսում դեգերող հայ գավառցիներն էին»[17]: Ակներեւ է, որ նշանավոր պատմարանը տուրք է տվել դասակարգային համերաշխության դոկտրինին: Իրականում Կաթողիկոսի գերեզմանի վրա իջած «լույսը» դիտելու էին գալիս բոլորը՝ աղքատներ եւ հարուստներ, հայեր

13 **Ջաքարեայ Սարկաւագ,** Պատմագրութիւն, հատ. երկրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 91-93:

14 Տե՛ս **Վ. Թորգոմեան,** նշվ. աշխ., էջ 603:

15 Անդ, էջ 602 (ընդգծումը մերն է - Ա. Ռ.):

16 **Վ. Թորգոմեան,** նշվ. աշխ., էջ 603:

17 **Ա. Գ. Հովհաննիսյան,** Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Երեւան, 1959, էջ 220:

ու թուրքեր: Համերաշխորեն, առանց ազգային պատկանելության, նրանից էին իրենց ապաքինումն ակնկալում «հիվանդքն ամենայն ազգաց»: Բայց հայերի համար հանգուցյալ Հայրապետի շիրիմը ուներ մեկ այլ խորհուրդ եւս, եւ որքան իրավացի է Հակոբ Սիրունին, երբ գրում է, թե «Յակոբ Ջուղայեցին հաւերժացած է հայ ժողովրդի սրտին մէջ, իբրեւ խորհուրդ եւ իբրեւ խորհրդանշան..., իսկ «Հոգեւոր Տիրոջ» գերեզմանի մէջ հայ ժողովուրդը իր դպրն է, որ պահած է»[18] :

Բացի Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցուց, անշուշտ, Բանկալթիի Ս. Հակոբ գերեզմանապանն են հուղարկավորվել նաեւ շատուշատ այլ ազգային, եկեղեցական, մշակութային հանրահայտ գործիչներ: Այստեղ հուղարկավորված առավել նշանավոր հանգուցյալներից էին խոջա Խոսրովը († 1691), կեսարացի Սիմեոն խալֆան († 1761), Հակոբ պատրիարք Նալյանը († 1764), Եւդոկիայի հայոց հոգեւոր առաջնորդ Հովսեփ եպ. Կեսարացին († 1770), նշանավոր քարոզիչ Ադամ արքեպիսկոպոսը († 1776), Եղիազար ամիրա Չայենցը († 1792), Վարդերես ամիրա Չայենցը († 1799), Կարապետ վրդ. Էրզրումցին († 1802), արքունի բարձրաստիճանավոր Քերովբե Ֆարֆառյանը († 1808), ականավոր պատմաբան Միքայել Չամչյանը († 1823), Գրիգոր ամիրա Չերազյանը († 1830) եւ ուրիշներ[19]:

1853 թ. գերեզմանատունը պարսպապատվել է, իսկ 1865 թ. հուլիսի 23-ի քաղաքապետարանի հատուկ որոշմամբ այստեղ թաղումներն արգելվել են: Նույն թվականին թույլատրվել է գերեզմանատանը պատկանող տարածքի վրա կառուցել Ս. Գրիգոր Լուսավորիչ (Խոր Վիրապ) եկեղեցին: Կառուցումն իրականացվել է նշանավոր բժիշկներ Ստեփան փաշա Ասլանյանի, Բարունակ բեյ Ֆերուհիսանի եւ Սերովբե Վիչենյանի (Սերվիչեն) հոգողությամբ: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1865 թ. հուլիսի 28-ին: 1879 թ. կից կառուցվել է մատուռ: 1909 թ. եկեղեցին հիմնովին վերանորոգվել է, գեղազարդվել, իսկ 1931 թ. հանդիսավորությամբ նշվել է հիմնարկեքի 66-րդ տարեդարձը: Այս ամբողջ ընթացքում «Հոգեւոր Տիրոջ» շիրիմը՝ որպես ուխտատեղի,շարունակել է մնալ հանրության ուշադրության կենտրոնում:

Ս. Հակոբ գերեզմանատան ծովահայաց գեղատեսիլ դիրքը, հիանալի բնապատկերը միշտ էլ գտնվել է քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում: Սույն հաստատության կողմից բազմաթիվ փորձեր են կատարվել այն զավթելու, հարթեցնելու եւ համապատասխան այլ կառույցների հատկացնելու ուղղությամբ: Տարածքի նկատմամբ հատկապես բացահայտ հետաքրքրություն է ցուցաբերել հարեւանությամբ գտնվող ռազմական ուսումնարանը: 1872 թ. երկրի բարձրագույն զինվորական մարմինները փորձեցին զավթել գերեզմանատան տարածքը՝ այն վարժարանի համար ձիամարզութեան եւ մարզահրապարակ դարձնելու մտադրությամբ: Պոլսահայ ազգային մարմինները՝Թ-ռակիայի Հայոց հոգեւոր թեմի առաջնորդ Թադեոս եպիսկոպոսի նախաձեռնութ-

18 **Յակոբ Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, առաջին հատոր (1453-1800), Բէյրութ, 1965, էջ 646, 650:
19 Տե՛ս **Բ. Թուղլաճի**, նշվ. աշխ., էջ 218, հմմտ. **Վ. Թորգոմեան,** նշվ. աշխ., էջ 601:

յամբ, խնդրագիր են ներկայացնում Աբդուլ Ազիզ սուլթանին եւ հայցում նրա հովանավորությունը: Մանրամասն ծանոթանալով համապատասխան փաստաթղթերին՝ սուլթանը հատուկ հրովարտակով հաստատել է հայերի վաղեմի իրավունքները գերեզմանատան տարածքի նկատմամբ[20]: Սակայն դա չի խանգարել, որ 1912 թ. երիտթուրքական կառավարության հանձնարարությամբ քաղաքապետարանը՝ թաղամասի վերակառուցման պատրվակով, գերեզմանատան տարածքի մի զգալի հատված հատկացնի կառուցվելիք պողոտային: Մաղաքիա արքեպ. Օրմանյանը, որ ականատեսն է այդ վայրագության, վկայում է, որ Հակոբ Դ. Ջուղայեցու դամբարանի շրջակայքում «ամփոփվեցան այն ոսկերոտիքը, որոնք հանուեցին գերեզմանոցին երկայնքին վրայ եւ քաշուած մասէն»[21]:

1935 թ. տվյալներով Ս. Հակոբ գերեզմանատունը, կից կառուցված եկեղեցին, մատուռն ու մյուս շինությունները միասին ունեին 61.000 քառակուսի մետր տարածք[22]: Իշխանությունների կազմակերպած մասնակի զավթումների հետեւանքով 1937 թ. այն կազմում էր արդեն 57.288 քառակուսի մետր[23]: 1939 թ. կառավարության հատուկ որոշմամբ դադարեցվեց տարիներ ի վեր հայկական համայնքի եւ քաղաքապետարանի միջեւ ընթացող դատական գործընթացը[24]: Նույն ժամանակ էլ գերեզմանատան տարածքը պետականացվեց:

Ս. Հակոբ հայոց գերեզմանատան կարեւոր առանձնահատկությունն այն է, որ, թեեւ, անկասկած, լինելով հայ լուսավորչական համայնքի սեփականություն, այնտեղ ԺԸ. դ. վերջերից սկսյալ հուղարկավորվել են նաեւ հայ կաթոլիկները: Հանգամանք, որ ժամանակի ընթացքում թյուրիմացության, թե՞ այլ պատճառներով երկու հարանվանությունների միջեւ դարձել էր տարաձայնությունների եւ վեճերի առարկա[25]: Սեփականատիրության շուրջ վեճերն այնքան են սրվել, որ հարցին միջամտել են քաղաքապետարանի համապատասխան կառույցները[26]: Միգուցե հենց այդ պատճառով է եւ այդ ընթացքում, որ իշխանությունների կողմից վերջնական որոշում է կայացվել հայկական գերեզմանատունը վերացնելու ուղղությամբ: Թույլատրվել է մինչեւ քանդման աշխատանքները 15 օրվա ընթացքում հանգուցյալների աճյունները տեղափոխել այլ գերեզմանոցներ[27]:

Քանդման-հարթեցման աշխատանքները սկսվեցին 1940 թվականին: Ընդամենը երկու տարվա ընթացքում ԺԶ.դ. կեսերից գոյություն ունեցող Բանկալթիի Ս.Հակոբ հայոց գերեզմանատունը, Ս. Գրիգոր Լուսավորիչ (Խոր Վիրապ) եկեղեցին, մատուռն ու կից

20 Բանկալթիի գերեզմանատան հայոց սեփականության վերաբերյալ պետական փաստաթղթերի պատճենները տե՛ս **Բ. Թուղլաճի**, նշվ. աշխ., էջ 217-227:

21 **Մաղաքիա արքեպ. Օրմանեան**, նշվ. աշխ., հատ. Բ., էջ 3038:

22 Տե՛ս «Նոր լուր», օրաթերթ, Սեպտեմբեր, 1935, 14 փետրվարի:

23 Տե՛ս «Ժամանակ» օրաթերթ, Սեպտեմբեր, 1937, 7 դեկտեմբերի (գերեզմանատան տարածքը՝ 50.000 մ², շինությունները՝6000 մ², եկեղեցու շուրջը գտնվող ազատ հողատարածքը՝1288 մ²):

24 Գերեզմանատան տարածքի պատանեության վերաբերյալ տարիներ շարունակվող դատական քաշքշուկի մանրամասները տե՛ս **Արմաւենի Միրօղլու**, Բանկալթիի ազգային գերեզմանատունը (Ս. Յակոբ գերեզմանատուն). «Լրաբեր», ՀԳԱ ակադեմիայի (հասարակ. գիտ.), 2008, թ. 4, էջ 87-94:

25 Մասնավորապես տե՛ս **Ն. Քոսյան,** Գերեզմանատուն Կաթողիկե հայոց Կ. Պոլսո, Վիեննա, 1931:

26 **Բ. Թուղլաճի**, նշվ. աշխ., էջ 226-227:

27 Տե՛ս «Արեւելք», օրաթերթ, Սեպտեմբեր, 1938, 9 փետրվարի:

շինությունները ոչնչացվեցին, փարածքը հարթեցվեց: Բարեբախտություն է, որ պոլսահայ ճանաչված մտավորական Գ. Մանուկյանը, որ հայտնի է «Հնասեր» մականվամբ, կարողացել է հավաքել շուրջ 5000 փապանագրեր ու դրանք բազմաթիվ պրակներով տրամադրել պատրիարքարանին, իսկ որոշներն էլ հրատարակել[28]:

Դեռևս մինչև իշխանությունների կողմից քանդման աշխատանքները սկսելը, Կ. Պոլսի Հայոց պատրիարք Մեսրոպ արքեպ. Ներսոյանը դիմել է Պեյօղլուի թաղական խորհրդին՝Հակոբ Դ. Ջուղայեցու աճյունը եւ դամբարանը փեղափոխելու վերաբերյալ[29]: Տեղափոխությունն իրականացվել է 1941 թ. ընթացքում[30], փեղափոխվել է նաեւ ճաղաշարը եւ նույնությամբ փեղադրվել Բերայի Ս. Երրորդություն եկեղեցու շրջաբակում:

Ինչպես հավաստում է Գ. Բամբուկճյանը, Ս. Հակոբ գերեզմանատան անփեր մնացած շիրմաքարերը թուրքերն օգտագործել են Թաքսիմ հանրային պարտեզի, Էմինեոնյու հրապարակի, այն հատող փողոցների, մայթերի, աստիճանների, սալահատակի եւ այլ շինությունների համար[31], որոնք անիծս «ականատեսները կհանդիսանան հայերի „Լքյալ գույքերի" ճակատագիրը բաժնած եւ մոռացության ենթարկված երբեմնի գերեզմանոցին»[32]:

Իսկ «Հոգեւոր Տէրն» այսօր էլ շարունակում է հայ ժողովրդի համար մնալ իբրեւ խորհուրդ եւ իբրեւ խորհրդանշան, շարունակում է ընդունել, մխիթարել, հուսադրել իրեն այցելության եկած ուխտավորներին:

28 Տե՛ս **Հնասէր**, Անհերացած հայերէն արձանագրություններ Կ. Պոլսո մեջ. «Բազմավէպ», 1931, թ. 4 եւ այլն:

29 Տե՛ս «Արեւելք», օրաթերթ, Կ. Պոլիս, 1938, 10 փետրվարի:

30 Տե՛ս **Դրանք Ասպուր**, Կոստանդնուպոլսի հայերը եւ իրենց պատրիարքները, Ստանպոլ, 2011, էջ 88:

31 **Գ. Բամբուկճյան,** նշվ. աշխ., էջ 266:

32 **Արմաենի Միրօղլու**, նշվ. աշխ., էջ 94: